**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ԳՀԾՁԲ-20-1/1-1**

ք. Երևան 21.11 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Հ. Ֆարամազյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 13 497 600 (տասներեք միլիոն չորս հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար ըվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[2] *Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:*

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի աոիեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[3]:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[4]:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և

Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.16 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ԿԱՊԻ ԵՎ ԱԿՀ վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ք. Երևան Բագրևանդի 5<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011127066<br>ՀՎՀՀ 02522157 | « ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ » ՓԲԸ<br>ՀՀ,ք. Աբովյան, Խաղաղության 1<br>«Կոնվերսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1930011980040100<br>ՀՎՀՀ 00096001 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ<br>Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ<br>Հ. ՖԱՐԱՄԱԶՅԱՆ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*N ԳՀԾՁԲ-20-1/1-1 պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ | Ստորաբաժանում | | Տեղակայում | Ինտերնետ Արագություն, Մբ/վ | Հասցե |
|---|---|---|---|---|---|
| 1 | 10037 | ՊՆ Համալիր | ք. Երևան | 318 | Բագրևանդի 5 |
| 2 | 19450 | ՊՆ ազգային ռազմավարական համալսարան | ք. Երևան | 10 | Երզնկյան 75 |
| 3 | ՏԶԿ | Հանրապետական զինկոմիսարիատ | ք. Երևան | 10 | Ազատության 2ա |
| 4 | 59559 | ՊՆ ռազմական ավիացիոն համալսարան | ք. Երևան | 10 | Արշակունյաց 87 ա |
| 5 | 24236 | ՊՆ Ռազմական համալսարան | ք. Երևան | 10 | Շոպրոնի 77 |
| 6 | 10724- | ՊՆ ռազմական ոստիկանություն | ք. Երևան | 10 | Ծ.Իսակովի 18/10 |
| 7 | 95532 | Խաղաղապահ զորամաս | ավ. Բալահովիտ | 5 | ավ. Բալահովիտ |
| 8 | 42285 | ՊՆ Ենթասպաների դպրոց | ք. Երևան | 5 | Թևոսյան 14 |
| 9 | 90999 | ԳՇ ստանդարտացման և չափագիտության բաժին | ք. Երևան | 2 | Ծ.Իսակովի 22 |
| 10 | 22059 | ԳՇ ռազմական հաղորդակցությունների բաժին | ք. Երևան | 2 | Տիգրան Մեծի 58 |
| 11 | 80088 | ՌՀՊ զորամաս | ք. Աշտարակ | 2 | Գիտավան |
| 12 | 14746 | ՊՆ պահպանման և սպասարկման գումդ. | ք. Երևան | 2 | Ծարավ Աղբյուրի 54 |
| 13 | 14705 | ՊՆ ռազմատեղագրական կենտրոն | ք. Երևան | 2 | Ծարավ Աղբյուրի 54 |
| 14 | 41096 | ՌՔԿՊ զորամաս | ք. Էջմիածին | 2 | ք. Էջմիածին |
| 15 | | Հասարակական խորհուրդ | ք. Երևան | 5 | Մոսկովյան 5 |
| 16 | 26338 | Աշխույթաղրասավորչական միջոցների նորոգման բազա | ք. Երևան | 2 | ք.Երևան, Աջափնյակ համայնքի Լենինականի փողոցի |
| 17 | 18120 | "Լեռնային Հայաստան" առողջարան | ք. Դիլիջան | 10 | ՊՆ "Լեռնային Հայաստան" տուն առողջարան |
| 18 | 60925 | Ուսումնական զորամաս | ք. Արմավիր | 2 | Զինավան |
| 19 | 45529 | զորավարժարան | ք. Արմավիր | 2 | Միյասնիկյան ավան |
| 20 | 16396 | ԲԿ | ք. Գորիս | 10 | Գորիս քաղաքի Անկախության փողոցի թիվ 60 |
| 21 | 60369 | զորամաս | ք. Գորիս | 2 | ՀՀ, Սյունիքի մ. Գորիս ք. Սյունիքի փ. N 3 միջ. դպրոցի հարևանությամբ գտնվող շենք-շինություններ (Գորիս-1) |
| 22 | 40861 | զորամաս | ք. Կապան | 2 | ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Գործարանային փողոցի վրա գտնվող Կապան-2 զորամաս |
| 23 | 54122 | զորամաս | ք. Կապան | 2 | ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Գր.Արզումանյան 1 հասցեում գտնվող Կապան-1 զորամաս |
| 24 | 54809 | զորամաս | ք. Գորիս | 2 | ք. Գորիս |
| 25 | 28233 | ԲԿ | գ. Կարճաղբյուր | 10 | գ. Կարճաղբյուր |
| 26 | 52258 | զորամաս | ք. Քարվաճառ | 2 | ք. Քարվաճառ |
| 27 | 75937 | զորամաս | բն.Զոփոլու | 2 | բն.Զոփոլու |
| 28 | 59016 | զորամաս | ք. Վարդենիս | 2 | Գեղարքունիքի մարզի Սոտք համայնքի Կենտրոնական փող. 1 նրբ. N 1 գտնվող "Սոտք-1" զինավան |
| 29 | 61091 | զորամաս | ք. Վարդենիս | 2 | Սոտք-1ե զինավան |
| 30 | 25836 | զորամաս | ք. Ճամբարակ | 2 | ք. Ճամբարակ |
| 31 | 20644 | զորամաս | Կարճաղբյուր | 2 | Կարճաղբյուր |
| 32 | 28418 | զորամաս | Կարճաղբյուր | 2 | Կարճաղբյուր |
| 33 | 37082 | ԲԿ | ք. Վանաձոր | 10 | Տերյան փողոց,Զինավան 2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 34 | 51191 | զորամաս | ք. Իջևան | 2 | ՀՀ Տավուշի մարզի (Իջևան) Գետահովիտ համայնքում գտնվող զորամաս |
| 35 | 51036 | զորամաս | ք. Բերդ | 2 | Գարեգին Նժդեհ 70 |
| 36 | 41507 | զորամաս | ք. Դիլիջան | 2 | Թբիլիսյան խճուղի |
| 37 | 28073 | զորամաս | ք. Իջևան | 2 | ք. Իջևան, Կրիվոյ |
| 38 | 27229 | զորամաս | ք. Նոյեմբերյան | 2 | ք. Նոյեմբերյան |
| 39 | 21127 | զորամաս | ք. Մեհրաբ | 2 | ք. Մեհրաբ |
| 40 | 81151 | զորամաս | ք. Դիլիջան | 2 | Թբիլիսյան խճուղի |
| 41 | 40133 | զորամաս | ք. Վանաձոր | 2 | Վանաձոր |
| 42 | 63853 | զորամաս | ք. Վանաձոր | 2 | Վանաձոր |
| 43 | 27527 | ԲԿ | ք. Եղեգնաձոր | 2 | ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում գտնվող Եղեգնաձոր-1 զորամաս |
| 44 | 60913 | զորամաս | ք. Սիսիան | 2 | ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Շիրակի փող. N 3 |
| 45 | 30515 | զորամաս | ք. Եղեգնաձոր | 2 | ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում գտնվող Եղեգնաձոր-1 զորամաս |
| 46 | 37564 | զորամաս | ք. Սիսիան | 2 | գ.Նորավան |
| 47 | 50869 | զորամաս | ք. Մեղրի | 2 | Լեոնիդ Հովհաննիսյանի անվ.փողոց |
| 48 | 70179 | զորամաս | ք. Վայք | 2 | Երկրապահների փողոց |
| 49 | 28920 | ԲԿ | ք. Երևան | 10 | Քանաքեռ ավան |
| 50 | 95532 | խաղաղապահ զորամաս | ք. Երևան | 5 | Նուբարաշեն |
| 51 | 58831 | զորամաս | ք. Արարատ | 2 | Բանավան |
| 52 | 69334 | զորամաս | գ.Գուսանագյուղ | 2 | գ.Գուսանագյուղ |
| 53 | 43755 | զորամաս | բն. Չորանքարա | 2 | Զինավան 5 |
| 54 | 32236 | զորամաս | ք. Մարտունի | 2 | Մխիթար Հերացի 7 |
| 55 | 26040 | զորամաս | բն. Չորանքարա | 2 | Զինավան 5 |
| 56 | 70839 | զորամաս | ք. Արթիկ | 2 | Շիրակի մարզ, ք.Արթիկ Ս.Դավթի թիվ 10 հասցեում գտնվող 'Արթիկ-1' զինավան |
| 57 | 54850 | զորամաս | գ. Մուղնի | 2 | Մուղնի |
| 58 | 83117 | զորամաս | ք. Գորիս | 2 | 10կմ Սրղի-Գյոլ |
| 59 | 32822 | զորամաս | ք. Երևան | 2 | Էրեբունի օդանավակայան |
| 60 | 53661 | զորամաս | ք. Գյումրի | 2 | Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոցի վրա գտնվող Գյումրի-60 զորամս |
| 61 | 55565 | զորամաս | ավ. Նուբարաշեն | 2 | 7-րդ փողոց |
| 62 | 55076 | զորամաս | ավ. Բալահովիտ | 2 | ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքում գտնվող «Բալահովիտ-2» զորամաս |
| 63 | 55035 | զորամաս | ք. Գյումրի | 2 | Լարպյան 19 |
| 64 | 51556 | զորամաս | ք. Ստեփանավան | 2 | Գարեգին Նժդեհ 71 |
| 65 | 15166 | զորամաս | գ. Մերձավան | 2 | ավ.Մերձավան |
| 66 | 79512 | զորամաս | գ. Պտղնի | 2 | Պտղնի |
| 67 | 45077 | զորամաս | ք. Եղվարդ | 2 | Կոտայքի մարզի Եղվարդ քաղ. համայնքում գտնվող 'Եղվարդ-1' զինավան |
| 68 | 79209 | զորամաս | ք. Գորիս | 2 | զինապահեստներ |
| 69 | 72207 | զորամաս | Թեժ Լեռ | 2 | Վանաձոր Թեժ Լեռ |
| 70 | 31549 | զորամաս | ք. Երևան | 2 | Ծարավ Աղբյուրի 54 |
| 71 | 24923 | զորամաս | ք. Երևան | 2 | Երևան քաղաքի Նուբարաշեն 2-րդ զինավան հասցեում գտնվող զորամաս |
| 72 | 25149 | զորամաս | ք. Երևան | 2 | Մոսկովյան 5 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 73 | 53620 | զորամաս | գ. Փամբակ | 2 | Լոռու մարզի, Փամբակ և Քարաշամբ համայնքների վարչական տարածքում գտնվող 'Փամբակ-1' զինավան |
| 74 | 98360 | զորամաս | ք. Երևան | 2 | Արցախի 61 |
| 75 | 57454 | զորամաս | ք. Երևան | 2 | Սարմենի 103 |
| 76 | 93353 | զորամաս | գ. Քասախ | 2 | Գևորգ Չաուշի 61 |
| 77 | 95414 | զորամաս | ք. Աբովյան | 2 | Զոնալ կայան |
| 78 | 94492 | զորամաս | գ. Լուսաղբյուր | 2 | Ղալթախչի/ Լուսաղբյուր |
| 79 | 94492 | բաժին | ք. Դիլիջան | 2 | ք. Դիլիջան |
| 80 | 41824 | զորամաս | ք. Գորիս | 2 | Գայլայան 5 |
| 81 | | "Մայր Հայաստան" թանգարան | ք. Երևան | 2 | ք. Երևան |
| 82 | 52265 | զորամաս | ք. Էջմիածին | 2 | Խորենացի 18 |
| 83 | 13516 | զորամաս | ք. Էջմիածին | 2 | Իսակովի փողոց |
| 84 | 73067 | ԿՈԲՀ | ք. Երևան | 2 | Մարգարյան 113 |
| 85 | 14203 | հոսպիտալ | ք. Երևան | 2 | Մարգարյան 115 |
| 86 | 88865 | հոսպիտալ | ք. Երևան | 2 | Ք.Երևան, Աղոնցի փողոցի հ.13/21 հասցեում գտնվող Երևան 75 հոսպիտ |
| 87 | 74352 | Սանիտարահամաճարակային | ք. Երևան | 2 | Արշակունյաց 73Ա |
| 88 | 73014 | Դեղորայքի բազա | ք. Աբովյան | 2 | Արզնի խճուղի |
| 89 | 72035 | հոսպիտալ | ք. Վանաձոր | 2 | Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոցի վրա գտնվող թիվ 23 շենք և շինություններ |
| 90 | 62426 | հոսպիտալ | ք. Վարդենիս | 2 | Վ.Համբարձումյան 93 |
| 91 | 70011 | հոսպիտալ | ք. Սիսիան | 2 | ՀՀ Սյունիքի մարզի Աղիտու համայնքում գտնվող զորամաս |
| 92 | 17193 | հոսպիտալ | ք. Բերդ | 2 | Աչեք Մանուկյան 25 |

*Համացանցը տրամադրել անխափան, 24 ժամյա, 500 Մբիթ/վրկ սիմետրիկ (500 Մբիթ/վրկ ելքային և 500 Մբիթ/վրկ մուտքային), երաշխավորված, օպտիկամանրաթելային կապուղով միացված, 64 ռեալ IP:*

*Կազմակերպել 500Մբիթ/վրկ արագությամբ համացանց Բագրևանդ 5 հասցեում, իսկ մնացած կետերը մեկ ընդհանուր WLAN-ով սահմանված արագություններով Data:*

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

*Ծառայությունը նախատեսվում է մատուցել 2020թ. 1-4-րդ եռամսյակների ընթացքում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով ("Գնումների մասին" ՀՀ օրենք 15-րդ հոդված, 6-րդ կետ, 2-րդ ենթակետ): Ամբողջը դիտարկել որպես մեկ չափաբաժին:*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ստորաբաժանում | | Տեղակայում | Արագություն, Մբ/վ | 1 Մբ/վ, միավորի առավելագույն արժեք ամսեկան | արժեք տարեկան |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 10037 | ՊՆ Համալիր | ք. Երևան | 318 | 1900 | 7250400 |
| 2 | 19450 | ՊՆ ազգային ռազմավարական հետազոտ | ք. Երևան | 10 | 1900 | 228000 |
| 3 | ՏԶԿ | Հանրապետական զինկոմիսարիատ | ք. Երևան | 10 | 1900 | 228000 |
| 4 | 59559 | ՊՆ ռազմական ավիացիոն համալսարան | ք. Երևան | 10 | 1900 | 228000 |
| 5 | 24236 | ՊՆ Ռազմական  համալսարան | ք. Երևան | 10 | 1900 | 228000 |
| 6 | 10724 | ՊՆ ռազմական ոստիկանություն | ք. Երևան | 10 | 1900 | 228000 |
| 7 | 95532 | Խաղաղապահ զորամաս | ավ. Բաղրամյան | 5 | 1900 | 114000 |
| 8 | 42285 | ՊՆ Ենթասպաների դպրոց | ք. Երևան | 5 | 1900 | 114000 |
| 9 | 90999 | ԳՇ առանդարասուցման և չափագրմության բաժին | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10 | 22059 | ԳՇ ռազմական հաղորդակցությունների բաժին | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 11 | 80088 | ՌԷՊ զորամաս | ք. Էջմիածին | 2 | 1900 | 45600 |
| 12 | 14746 | ՊՆ պահպանման և սպասարկման գունդ | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 13 | 14705 | ՊՆ ռազմատեղագրական կենտրոն | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 14 | 41096 | ՌՔԿՊ զորամաս | ք. Էջմիածին | 2 | 1900 | 45600 |
| 15 | | Հասարակական խորհուրդ | ք. Երևան | 5 | 1900 | 114000 |
| 16 | 26338 | Մշակութալուսավորչական միջոցների նորագման բազա | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 17 | 18120 | "Լեռնային Հայաստան" առողջարան | ք. Դիլիջան | 10 | 1900 | 228000 |
| 18 | 60925 | Ուսումնական զորամաս | ք. Արմավիր | 2 | 1900 | 45600 |
| 19 | 45529 | զորավարժարան | ք. Արմավիր | 2 | 1900 | 45600 |
| 20 | 16396 | ԲԿ | ք. Գորիս | 10 | 1900 | 228000 |
| 21 | 60369 | զորամաս | ք. Գորիս | 2 | 1900 | 45600 |
| 22 | 40861 | զորամաս | ք. Կապան | 2 | 1900 | 45600 |
| 23 | 54122 | զորամաս | ք. Կապան | 2 | 1900 | 45600 |
| 24 | 54809 | զորամաս | ք.Գորիս | 2 | 1900 | 45600 |
| 25 | 28233 | ԲԿ | գ. Կարճաղբյուր | 10 | 1900 | 228000 |
| 26 | 52258 | զորամաս | ք. Քարվաճառ | 2 | 1900 | 45600 |
| 27 | 75937 | զորամաս | բն.Չոփուլու | 2 | 1900 | 45600 |
| 28 | 59016 | զորամաս | ք. Վարդենիս | 2 | 1900 | 45600 |
| 29 | 61091 | զորամաս | ք. Վարդենիս | 2 | 1900 | 45600 |
| 30 | 25836 | զորամաս | ք. Ճամբարակ | 2 | 1900 | 45600 |
| 31 | 20644 | զորամաս | Կարճաղբյուր | 2 | 1900 | 45600 |
| 32 | 28418 | զորամաս | Կարճաղբյուր | 2 | 1900 | 45600 |
| 33 | 37082 | ԲԿ | ք. Վանաձոր | 10 | 1900 | 228000 |
| 34 | 51191 | զորամաս | ք. Իջևան | 2 | 1900 | 45600 |
| 35 | 51036 | զորամաս | ք. Բերդ | 2 | 1900 | 45600 |
| 36 | 41507 | զորամաս | ք. Դիլիջան | 2 | 1900 | 45600 |
| 37 | 28073 | զորամաս | ք. Իջևան | 2 | 1900 | 45600 |
| 38 | 27229 | զորամաս | ք. Նոյեմբերյան | 2 | 1900 | 45600 |
| 39 | 21127 | զորամաս | ք. Մեհրաբ | 2 | 1900 | 45600 |
| 40 | 81151 | զորամաս | ք. Դիլիջան | 2 | 1900 | 45600 |
| 41 | 40133 | զորամաս | Վանաձոր | 2 | 1900 | 45600 |
| 42 | 63853 | զորամաս | Վանաձոր | 2 | 1900 | 45600 |
| 43 | 27527 | ԲԿ | ք. Եղեգնաձոր | 2 | 1900 | 45600 |
| 44 | 60913 | զորամաս | ք. Սիսիան | 2 | 1900 | 45600 |
| 45 | 30515 | զորամաս | ք. Եղեգնաձոր | 2 | 1900 | 45600 |
| 46 | 37564 | զորամաս | ք. Սիսիան | 2 | 1900 | 45600 |
| 47 | 50869 | զորամաս | ք. Մեղրի | 2 | 1900 | 45600 |
| 48 | 70179 | զորամաս | ք. Վայք | 2 | 1900 | 45600 |
| 49 | 28920 | ԲԿ | ք. Երևան | 10 | 1900 | 228000 |
| 50 | 95532 | Խաղաղապահ զորամաս | ավ. Բալահովիտ | 5 | 1900 | 114000 |
| 51 | 58831 | զորամաս | ք. Արարատ | 2 | 1900 | 45600 |
| 52 | 69334 | զորամաս | գ.Գոառնազյուղ | 2 | 1900 | 45600 |
| 53 | 43755 | զորամաս | բն. Չոբանքարա | 2 | 1900 | 45600 |
| 54 | 32236 | զորամաս | ք. Մարտունի | 2 | 1900 | 45600 |
| 55 | 26040 | զորամաս | բն. Չոբանքարա | 2 | 1900 | 45600 |
| 56 | 70839 | զորամաս | ք. Արթիկ | 2 | 1900 | 45600 |
| 57 | 54850 | զորամաս | գ. Մուղնի | 2 | 1900 | 45600 |
| 58 | 83117 | զորամաս | ք. Գորիս | 2 | 1900 | 45600 |
| 59 | 32822 | զորամաս | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 60 | 53661 | զորամաս | ք. Գյումրի | 2 | 1900 | 45600 |
| 61 | 55565 | զորամաս | ավ. Նուբարաշեն | 2 | 1900 | 45600 |
| 62 | 55076 | զորամաս | գ. Լուսակերտ | 2 | 1900 | 45600 |
| 63 | 55035 | զորամաս | ք. Գյումրի | 2 | 1900 | 45600 |
| 64 | 51556 | զորամաս | ք. Ստեփանավան | 2 | 1900 | 45600 |
| 65 | 15166 | զորամաս | գ. Մերձավան | 2 | 1900 | 45600 |
| 66 | 79512 | զորամաս | գ. Պռոշյան | 2 | 1900 | 45600 |
| 67 | 45077 | զորամաս | ք. Եղվարդ | 2 | 1900 | 45600 |
| 68 | 79209 | զորամաս | ք. Գորիս | 2 | 1900 | 45600 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 69 | 72207 | զորամաս | Թեժ Լեռ | 2 | 1900 | 45600 |
| 70 | 31549 | զորամաս | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 71 | 24923 | զորամաս | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 72 | 25149 | զորամաս | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 73 | 53620 | զորամաս | գ. Փամբակ | 2 | 1900 | 45600 |
| 74 | 98360 | զորամաս | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 75 | 57454 | զորամաս | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 76 | 93353 | զորամաս | գ. Քասախ | 2 | 1900 | 45600 |
| 77 | 95414 | զորամաս | ք. Աբովյան | 2 | 1900 | 45600 |
| 78 | 94492 | զորամաս | գ. Լուսաղբյուր | 2 | 1900 | 45600 |
| 79 | 94492 | բաժին | ք. Դիլիջան | 2 | 1900 | 45600 |
| 80 | 41824 | զորամաս | ք. Գորիս | 2 | 1900 | 45600 |
| 81 | | "Մայր Հայաստան" թանգարան | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 82 | 52265 | զորամաս | ք. Էջմիածին | 2 | 1900 | 45600 |
| 83 | 13516 | զորամաս | ք. Էջմիածին | 2 | 1900 | 45600 |
| 84 | 73067 | ԿՈԲՀ | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 85 | 14203 | հոսպիտալ | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 86 | 88865 | հոսպիտալ | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 87 | 74352 | Սանիտարահամաճարակային | ք. Երևան | 2 | 1900 | 45600 |
| 88 | 73014 | Դեղորայքի բազա | ք. Աբովյան | 2 | 1900 | 45600 |
| 89 | 72035 | հոսպիտալ | ք. Վանաձոր | 2 | 1900 | 45600 |
| 90 | 62426 | հոսպիտալ | ք. Վարդենիս | 2 | 1900 | 45600 |
| 91 | 70011 | հոսպիտալ | ք. Սիսիան | 2 | 1900 | 45600 |
| 92 | 17193 | հոսպիտալ | ք. Բերդ | 2 | 1900 | 45600 |

***Հավելված N 2***

***N ԳՀԾՁԲ-20-1/1-1 պայմանագրի***

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման ենթակա ծառայության անվանումը | |
|---|---|---|
| 1 | Ինտերնետային ծառայության մատուցում (համացանցային ծառայություններ մատուցողներ (isp) | Վճարումները կիրականացվեն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում |

CPV կոդն է 72411100/504

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

« ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ » ՓԲԸ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Հ. ՖԱՐԱՄԱԶՅԱՆ

*Հավելված N 3*
*N ԳՀԾՁԲ-20-1/1-1 պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ______________________ | հհ ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ ______________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«    » «          » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20  թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «                    » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

***Հավելված N 3.1***
***N ԳՀԾՁԲ-20-1/1-1 պայմանագրի***

ԱԿՏ N ______

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________ -ի

Պատվիրատուի անվանումը | Կատարողի անվանումը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ________________

պայմանագրի կնքման ամսաթիվը | պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________

ազգանուն, անուն

______________________

Ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախապատրաստված ներկայացուցիչ՝

______________________

ազգանուն, անուն

______________________

ստորագրություն